

18890

18891

18892

1889  
891-99  
ф-31



1. Քաղաքացիներ, Ապրիլի 19-ին Երևան
2. Բազմաբնույթ Մեծի՝ Գրեյս-Կոմիտաս
3. Գրեյս-Կոմիտաս



ԱՄԱՂԹԵՂՋԻԻՐ

---



891.542-1

Բ-37

ԲԱՍՏ ԲԱՂԴ ՈՒՆԻ

Բ.

# ԱՄԱՂԹԵՂՋԻԻՐ

1004  
15069



Կ. ՊՈԼԻՍ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ՄԱՏԹՆՈՍԵԱՆ

1900



4365

Հրատարակութեան իրաւունքն  
իրեն է վերապահած

ՇԵՂԻՆԱԿՆ



ԹՈՒՂԹ ՅՈԳՆԱԳԵՏ ԵՒ ԲԱԶԱՀՄՈՒՏ

Հ. Ղ. Ա. ի

ԱՌ ԲԱՍՏ ԲԱՂԴ ՈՒՆԻ

Մեծարգոյ \* \*

Սրտանուէր Պատուական նուագիդ՝  
հարկ հրահանգաց պահանջէր ընդարձակ  
չնորհակալիս՝ այլ զի որ ի սրտէ բղխէ՝  
մեծ է և փոքր բան, ընկալ զհաւաստիս  
երախտագետ իմացուածոյս, և զմաղ-  
թանս բարեկենդանութեանդ յամայր  
ամս :

\* \*



Կեանքին պատկերներ  
 Գոյներով Կարբեր  
 Մէկ ձեզ ժողովելով  
 Դըրե + ովէ + ով =  
 Որ էնչ էր Կեպար  
 Նորո-Յեան յարմար  
 Ըստեպ Կե-րեմաց  
 Մերքե ալ + օղորդեաց :  
 Թեպեպ ասանց ձեռ  
 Կան՝ որ ընդեր չեն  
 Այլ Բարոյական  
 Ունին ձեզ զախճան :  
 Այս էսկ է ձեպն  
 Ի՞՞ Նըշանաբան  
 Որ թէ + իչ ու շար  
 Բարոյն ըլլած իրար :  
 Ասանկ էս ըզբար  
 Զանց ըրի ճարար  
 Ոճոյ հեպե-ող  
 Ըլլալու յախող





Ա. ԱՅԳՕՐԷՅԻՆ ԵՐԿՆ

**Մ**ԱՐԵԼՈՎ ճրագներ գիշերուան աղօտ  
Ծագեց աշխարհի լուսոյ առաւօտ  
Ներդաշնակ կերգեն հոս հոն սոխակներ  
Գեղածիծաղ է բընութեան պատկեր :

Հորիզոնին ալ համակրական գոյն  
Ինչ հաճելի է մեզի ամենուն  
Իսկ լեռներուն բաց ըսքանչելի ծոց  
Կը ներկայանան մերկապարանոց :

Դաշտեր են կանանչ ծառք պըտողովք լեցուն  
Ծաղիկներ բացուած հոտով երփնագոյն  
Մէկ կողմ ծիծեռներ միւս կողմ թիթեռներ  
Պարելու ետեւ օդին մէջ վար վեր :

Միջատաց բրդգիւն, գետերուն կարկաջ  
Իրարու խառնած այնքան սիրահաճ  
Զեփիւռին փըչելն անձկալի հեշտին  
Յիշատակութիւն Երկրաւոր գրախտին :

Ասոնք գործեր են նախախնամութեան  
Որուն լեզուներ կ'ըլլան գովասան  
Թէ բանական մարդ, եւ թէ անասուն  
Անոր կը վայլեն չըքնաղ բարութիւն :



Բ. ԱՄԱՆՈՐՆ

Գ. ՀԱՄԱՏԱՐԱԾՆ

**ՏԱՐԻՈՅՆ** շրջանին ըսկիզբն է այսօր  
 Կազանդի տօնին նոր օր ամանոր  
 Մարդեր իրարու արեւշատութեան  
 Բաժակ կը խրմեն բարեմազթական :

Թող բարի ըլլայ եկող ամանոր  
 Բերքերովն ըլլայ միշտ արգասաւոր  
 Տխտէ կենցաղոյս ալ խաղաղութիւն  
 Մարդկային ցեղին հաճութիւն անհուն :

Սըրտերնուս միջեւ ծագած արեգակ  
 Թափացմամբն իրեն ճառագայթարձակ  
 Կը տըպաւորէ յոյսեր նորանոր  
 Բարեբաստիկ է այն եւ բազմաւոր :

Մաշած ըզգեստներն են թողած մէկ դին  
 Անոնց տեղ նորեր կը փոխանակուին  
 Մըտերիմ սիրով եղած այցելու  
 Քաղաքացիներ բոլոր իրարու :

Մաղթեմ ուրեմն իմ բարեկամներուն  
 Հաւասարապէս արեւշատութիւն  
 Տարիս ամենուն ըլլայ բարեբեր  
 Յաջողէ Աստուած անոնց փափաքներ :

**ԱՅՍ** համատարած գոյութիւններուն  
 Հիանալի է համաձայնութիւն  
 Թէ երգ ներշնչող անոնց յորինուած  
 Մէկ երգ ներգաշնակ ժպտիտով անծարձ :

Մարմանդն ու մարդեր որ շուրջ կ'երեւան  
 Աւիւն կը շքնէն բանաստեղծական  
 Բլուրներն հովիտներ նըկարագրապէս  
 Համայնածաւալ կազմած մէկ պարտէզ :

Նայիմ գարմացմամբ ծովուն պաղպաղուն  
 Շարքերուն պըզտիկ եւ մեծ նաւերուն  
 Ճամաքի շէնքերն ու աշտարակներ  
 Հրաշալիքներով ճարտար մէկ պատկեր :

Եւ սոյն կենսաբեր ոսկեծոյլ արեւ  
 Համաստեղութեան կայնած հոն վերեւ  
 Որ թէ ազգեցիկ իրեն ջերմութեամբ  
 Կը գըրկէ իրերն ամէն սիրակապ :

Լուսին ալ պայծառ դըշխոյ գիշերի  
 Պրտոյտովն իրեն բարէ նազելի  
 Մարդըրտանրման շիթեր կը ցօղէ  
 Առաւօտներուն մեր օր ըստ օրէ :



## Գ. ԲԱՆԳԱԿՈՒՇԱՆՔ

**Մ**էկ քօղ է ծածկած Երկինքին երես  
 Զանիկայ շողի կամ բամպակ կարծես  
 Որով ըսպիտակ դարձած չորս անկիւն  
 Չես կարող տեսնել յիսուն քայլ հեռուն :

Ամպեր կը թափեն ձիւնի պատառներ  
 Զիւնեղէն չապիկ ես ալ եմ հագեր  
 Առարկայ ամէն միօրինակ նոյն  
 Վերարկու առած ունի հարսի գոյն :

Ասանկ համագոյն ըսպիտակազգեաց  
 Տարերք որչափ կան ի մի են ձուլուած  
 Եւ առժամեաց ձիւնն եղած պատրուակ  
 Բիծեր է սեւ սեւ պահած իրեն տակ :

Այլ ես կ'ուզէի որ աշխարհ ամէն  
 Ճերմակ միշտ ըլլար ներսէն ու զբոսէն  
 Մարդ եւ անասուն ծառեր եւ բոյսեր  
 Շուշանի գոյնով աչքի երեւէր :

Կ'ուզէի եղծել ես ամէն ըստուեր  
 Ընդհանուր գրծել ձերմակ մէկ պատկեր  
 Որուն մէջ փոխուեր մըթագոյն գիշեր  
 Տորեկին լուսոյն հետ ըլլար ընկեր :

## Ե. ԾՈՎԱՅԻՆ ԶԲՕՍԱՆՔ

**Մ**ԱՆԻ թող սահի մեր փոքրիկ նաւակ  
 Հանդարտ ծովուն վրայ բոլոր կապուտակ  
 Սահի շուտ սահի որ յառաջանանք  
 Ուրախ մեր ըլլայ այսօր ըզբօսանք :

Եթէ մեր առջեւ ծով ժըպիտ ունի  
 Մերինն անոր հետ է փոփոխակի  
 Եւ անոր վըրայ կ'երթանք սահնիթաց  
 Անոր երեսին աչքերնիս յառած :

Թիեր երկուստէք իրարու ետեւ  
 Թաթախուած մբանեն ջրերուն միջեւ  
 Ելէեւէջով ալ ալիքներ արծաթ  
 Ետեւնիս թողունք շարքով անընդհատ :

Մեր նաւաստիին զըւարթ կերպարան  
 Կ'երեւայ աշխոյժ եւ թէ փութաջան  
 Անոր աջն ու ձախ թիեր կը շարժեն  
 Թափելով քրտինք իր բոլորտիքէն :

Թող սահի նաւակն եւ մենք անոր հետ  
 Թողունք ետեւնիս ալիքներ վեա վեա  
 Սահի ու սահի որ կըզգին երթանք  
 Զըւարթ մեր անցնի այսօր ըզբօսանք :



## Զ. ԳԻՒՂԱՅԻՆԵՐՈՒՆ ԵՐԳՆ

**Լ**ԵՅՈՒՆ են հասկեր նորէն ու նորէն  
Քաղենք ու ժողովենք ցորեն ու ցորեն  
Հասկեր են լեցուն նորէն ու նորէն  
Հերիք է հերիք մեր տարուան պարէն :

Նորէն մեզ Աստուած տըւաւ մեծ պարէն  
Հաց հանապազորդ պարգեւն է իրեն  
Քոյրեր եղբայրներ խումբ ելլենք ամէն  
Մեր բերանքն իրեն օրհնենքներ բըղխեն :

Գիւղացւոյն ջանքն է ըլլալ արտավար  
Եւ խըրճիթն ունել առանձին ամբար  
Ամբարներուն մէջ լեցուն է ցորեան  
Արջար ու ոչխար , դաշտերուն վըրայն :

Գիւղացին իր ձեռք բըռնելով ճոպան  
Ապահոված է իրեն ապագայն  
Աշխատանքն իրեն հասկի պէս բեղուն  
Կերկարեն օրեր մինչեւ ծերութիւն :

Գիւղացւոյն պարզ են բարք եւ հանգամանք  
Պարզութեամբ չունի դիտմունք խորամանկ  
Պարզ օղին մէջն ալ կը վայլէ հանգարտ  
Կեանքի քաղցրութիւն մարմնով անազարտ :

## Է. ԻՄ ՏՂԱՅՈՒԹԻՒՆՆ

**Կ**ԱՆԳՈՒՆԻ մի չափ հասակ ունէի  
Հաղիւ հինգ տարուան եւ ոչ աւելի  
Կարճիկ եւ հազած ըզգեստ զարգարուն  
Խոսոսով մազերս բոլոր դեղնագոյն :

Ծանօթին մէկուն երբոր հարսանեայ  
Գընացիւ էինք մօրս հետ հրաւիրուած  
Հոն պարտէզին մէջ ետեւէ խաղի  
Տեսայ եւ շինուած աղուոր լըճակ մի :

Լըճակին մէջն ալ պըզտիկ մէկ նաւակ  
Աչքիս երեւցած չարժեց իմ փափաք  
Ուստի եւ շուտով տախտակ մի գըտայ  
Եւ լըճակին մէջ դըրի դանիկայ :

Ասանկ միջոցով եւ խելքով պըզտիկ  
Ուղեցի երթալ առնել խաղալիկ  
Հաղիւ ոտք կոխած եւ տախտակին վրայ  
Լըճին մէջ ընկած պտուղ ըսկըսայ :

Հարսնեւորք ինձի հասած օգնութեան  
Մինչեւ իմ շապիկ թըռչած դիս գըտան  
Ահա թէ ինչպէս իմ մօր սիրելի  
Եւ պատճառ եղայ մեծ սրբտապօղի :



Ը. ԻՄ ՄՕՐ ՅԻՇԱՏԱԿՆ

**Մ**ԸՏԲԻՍ մէջ տրպուած իմ մօր յիշատակ  
Քանի քաղցր է ինձ ամէն ժամանակ  
Որուն առանձին սիրոյն հաւաստիք  
Կը խոստովանիմ որդիս անդրանիկ :

Անոր գերին էի արդէն երջանիկ  
Բիւր գուրգուրանքով կիտարաց ծաղիկ  
Ըստէնքներէն կաթ ըսպիտակաթոյր  
Բերնէն ալ հազար ընդունած համբոյր :

Ես ինչ որ ունիմ անձիս վրայ բարի  
Մօրմէն եմ զանոնք առած ծաղկատի  
Անոր կըրթութեամբ չար ընկերներէն  
Մանկութեան ատեն խորշեցայ արդէն :

Առաջին անգամ երբ սուրբ խորհրդոց  
էի մօտեցած այնքան սիրաբոց  
Քանիպատիկ ես իմ մօր անձկալի  
Ուրախութիւն էր որ պատճառեցի :

Հնազանդ Աստուծոյ պատուիրաններուն  
Մօրս յայտնեցի միշտ իմին յարգութիւն  
Երբոր վըշտացած էր իմ մօր երես  
Երկինք ամպոտած կը կարծէի ես :

Թ. ԱՌԱՋԻՆ ԳԱՍՆ

**ՆԱՅԷ** ով մանուկ դեռ մատաղամեայ  
Դէպի վեր երկնից կապուտակին վրայ  
Աստուծոյ գահն է որ կը բարձրանայ  
Անոր լեզուներ կ'երգեն ոխաննայ :

Զօրութիւններուն անիկայ է տէր  
Շըրջապատողներն անմահից գընդեր  
Որոնց բազմութիւն ցորեկ ու գիշեր  
Կը կատարեն միշտ անոր հրամաններ :

Հինաւուրց Աստուածն որ հայրեր մերին  
Հաստատ հաւատքով արդէն պաշտեցին  
Որուն սուրբ անունն երկրիս վրայ չորս գին  
Յիշատակներով յաւերժացուցին :

Նոյն Աստուծոյ է որուն համար որ՝  
Վրկայք յանձն առին հալածանք աքսոր  
Անհաւատներուն որչափ կան բոլոր  
Ձանացին ըլլալ քարոզ եւ յորդոր :

Սուրբ Աւագանէն ծընած մանուկ դուն  
Պաշտէ Աստուածն այն նախահայրերուն  
Մեծ պատկառանքով յիշէ իր անուն  
Ըրէ անոր միշտ երկրրպագութիւն :



## Ժ. ԺԻՐԱՅՐ

**Ո**ր քեզ դաւանեց ճըշմարիտ Աստուած  
 Խըստակեցութեամբն իրեն երկիւղած  
 Քու ըսքանչելի անուան անդադար  
 Երկըրպագութիւն ըրաւ հըրճուաբար :

Աւետարանին պահելով պատուէր  
 Սիրեց նախ զԱստուած վերջն ալ իր ընկեր  
 Վարքով հրեշտակի նըման երկնային  
 Մահացուցութեամբ յաղթեց իր անձին :

Չանիրաւեցաւ երբէք ուրիշին  
 Ոխակալութեան չունեցաւ ոգին  
 Չըքաւորներուն եղած օգնական  
 Հիւանդներուն ալ տարաւ միշտ դարման :

Որբերն այրիներ յանձանձեց բոլոր  
 Եւ մըխիթարեց անձեր վըշտաւոր  
 Նախախնամութեան հըռչակեց անուն  
 Ամէն անունէն վեր եւ գերագոյն :

Որ արդարներուն եւ դու պատրաստած  
 Օթեւան քու քով ու բարի Աստուած  
 Հաճէիր գընել լուսով փայլունակ  
 Ժիրայրին գըլուխ արժանի պըսակ :

## ԺԱ. ՀԱՄԱԿՐԱՆՔ

**Կ**որձեի եւ զիս իրապէս ընել  
 Խորանիդ առջեւ գոգնոց ոսկեթեւ  
 Վըրայս ունելով ինչպէս մէկ աւանդ  
 Պաշտելի անունդ քարով ազամանդ :

Կուզէի որ քեզ ըլլամ առնթներ  
 Գեղաղարդ փընջով կապուած ծաղիկներ  
 Եւ անուշահատ բուրմամբ ամէն ժամ  
 Մեծիկայելչութեանդ ընտիր դարդ ըլլամ :

Կուզէի ըլլալ զըմուռս ու կընդրուկ  
 Պատճառելու քեզ անբսպառ հաճոյք  
 Այրիլ խունկի պէս , ծըխիլ քու երես  
 Ընծայելու զիս սիրոյդ ողջակէզ :

Կուզէի ըլլալ մեծաջան լապտեր  
 Տաղաւարիդ քով անբաժան ընկեր  
 Որ ըզմայլելի քու անձ մըշտատեւ  
 Երջանկութիւնն իմ ըլլար կեանքս արեւ :

Կուզէի եւ զիս ընել բըռնաբար  
 Վերջին աստիճան քեզի սիրահար  
 Կուզէի այո՛ կուզէի ըլլալ  
 Քեզի համար Տէր եւ ամէն ինչ ալ :



## ԺԲ. ԲՈՒՌՆ Է ՍԷՐ

**ՀԱՉԻԻ** ես խելքիս եղած էի տէր  
 ես քեզ զասեցի ամէն իրէ վեր  
 եւ քեզ ընծայած զիս անձնանրէր  
 Յանձն առի ամէն զոհողութիւններ :

Եզան ինձ բոլոր արհամարհութիւն  
 Իբնածիծաղներն արարածներուն  
 Որովհետեւ զիս մասնած գերութեան  
 Յանկացայ ապրիլ քեզմէն անբաժան :

Մըտածութիւններ ներկայ ապագայ  
 Տըպաւորեցան հաստատ քու վըրայ  
 Քեզի համար ալ որ հաճոյք ըլլայ  
 Ամենէն ալ ես եղայ բացակայ :

Իմ կուտական սիրտն հաւատարմաբար  
 Վերապահեցի ես քեզի համար  
 Քեզի ես ըրի իմ վերջին վախճան  
 Մինչեւ մահուան ժամ, մինչեւ գերեզման :

Արդ իմ փափաքած ուր է քու երես  
 Որուն սիրովն եմ այնչափ վառուած ես  
 Ով Տէր հաճէիր ցոյց տալ քու երես  
 Որուն հիացած կարօտս աննեմ ես :

## ԺԳ. ԱՂԷ

**ԻՆՉՈՒՐ** է գոցուած երկինքին երես  
 Որուն ներսի դին չեմ նըշմարեր ես  
 Ինչո՞ւ կը պակսին ինձ երկու թեւեր  
 Որոնցմով երկինք հասնիմ անհամբեր :

Հորիզոնին ճոթն անձկալի տեսքէն  
 Դէպ ի վեր ցրցուած լեռներ կը ծածկեն  
 եւ գիշեր երկայն որ մըթութեամբն իր  
 Արեւուն լոյսէն կը զըրկէ երկիր :

Ինչ զըժբազդութիւն որ դրախտ երկրաւոր  
 Կորսընցունելով եղած ենք աքսոր  
 Որքան սըզալի կան մահարձաններ  
 Որ մեր սիրելիքն արդէն են ծածկեր :

Ինչո՞ւ է համեստ առաքինութիւն  
 Ըստէպ անարգուած թողուած մէկ անկիւն  
 Հապա շատերուն բարի խորհուրդներ  
 Որ չեն կատարուած զիտմամբ մարդասէր :

Ինչո՞ւ կեանքն անմահ կ'ըսեմ ապագայ  
 Երկայն ժամանակ հեռուն կը մընայ  
 Ո՛հ ինչո՞ւ այսքան սըբափ բաբախում  
 Իմ ներսն ունիմ ես հաստատ անհատնում :



## Ժ. Գ. ՅՆՈՐՔ

**ԸՍԵՆ** կուզեմ թէ մազ մի չեն արժեր  
 Աշխարհիս բոլոր քրմահաճոյքներ  
 Երեւակայուած խաբեբայ իրեր  
 Որ նըպատակի մի չեն ծառայեր :

Յուսագրութիւններ այնքան փայլունակ  
 Աչքերնուս առջեւ տարբեր ձեւի տակ  
 Տեսէք որ քողի պէս ունին ծածկոյթ  
 Եւ կախարդի պէս խաբող երեւոյթ :

Թէ կ'ուզէք ըլլալ միշտ երիտասարդ  
 Եւ թէ անցունել ձեր օրեր զըւարթ  
 Ձեզ կարելի չէ ունել այնքան վեր  
 Չախող կեանքին մէջ յաջողութիւններ :

Կառուցանելով մեծամեծ շէնքեր  
 Առանց հիմերու օգէն այնքան վեր  
 Եւ ծառայ ըլլալ որ չէ կարելի  
 Մէկէն Աստուծոյ եւ մամոնայի :

Այսքան այլանդակ յիմարութիւններ  
 Բովանդակ աշխարհս դերի են ըրեր  
 Որով կերազէ տեսիլք ուրուական  
 Աւազ ես կըսեմ աւանդ ըուն է այն :

## Ժ. Ե. ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ

**ԿԵՆՏԱՂՈՅՍ** հանգիստն ու խաղաղութիւն  
 Ծառայութեամբ է հըպատակներուն  
 Այսպէս հին ատեն հընազանդութիւն  
 Դասած ունէին զոհէն վերագոյն :

Բարեկարգութեան համար ամենուն  
 Պէտք է ամէն տեղ մէկ իշխանութիւն  
 Եւ պահպանութիւն միշտ օրէնքներուն  
 Ջրսպելու համար ապըստամբութիւն :

Ջընջէ աշխարհէս կառավարութիւն  
 Հըպատակութիւնն ալ օրէնքներուն  
 Ամէն տեղ տիրած անիշխանութիւն  
 Մարդեր իրարու կը խըմեն արիւն :

Բընականապէս երկրիս չորս անկիւն  
 Մարդու համար կայ պարտաւորութիւն  
 Ծառայ չըլլալու իր հաճոյքներուն  
 Ընելու իրմէն մեծին յարգութիւն :

Աղամ կորընցուց իր անմեղութիւն  
 Արհամարհելովի հրաման Գերագոյն  
 Հետեւանք անոր եղաւ ապարդիւն  
 Կըրեց սոսկալի դատապարտութիւն :



ԺԶ. ՅԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆՆ

**Կ**ԱՄՔ ունիմ ես զիս փոխել վերջապէս  
 Կատարելութիւն ունենալու ես  
 Յառաջադրութեամբ անեղծ ապրելու  
 Ուրիշին չըլլալ պատասխանատու :

Որ բաց ճակատով արձակ համարձակ  
 Ընդ միշտ կարենամ ելլել հրապարակ  
 Աստուծոյ առջեւ եւ թէ մարդերուն  
 Կարենամ յայտնել իմ անկեղծութիւն :

Աղքատութեան հետ ունեւորութիւն  
 Բըռնելու ջանամ հաւատարագոյն  
 Թէ վըշտերուն մէջ թէ խընդումներուն  
 Համակերպարար ըլլամ միեւնոյն :

Արկածներուն մէջ ըլլամ անտարբեր  
 Տագնապնդներուն մէջ միշտ իմ անձիս տէր  
 Օրինակ առած Յովբ Երանելի  
 Ըսեմ — Աստուած իմ քու կամք կատարուի :

Նոյն իսկ հալածանք ինչպէս չարչարանք  
 Չը պատճառեն ինձ բընաւ զարհուրանք  
 Ինձի չունենայ կեանք իսկ հեշտագոյն :  
 Մահէն աւելի կարեւորութիւն :

ԺԷ. ԱՌԱՋԻՆ ՅԱԻՆ

**Ա**ԻԱՂ Սեպուհեան ամուսիններուն  
 Որ ունեցան այն վըշտահարութիւն  
 Որոնց հանդիպած զեւ չէր անանկ ցաւ  
 Պատճառած իրենց կըսկիծներ անբաւ :

Աստուած երբ անոնց տըւաւ մէկ որդի  
 Յընծութիւննին էր չափէն աւելի  
 Հազիւ լոյս տեսած սիրոյն առարկայ  
 Ժամ մի ապրեցաւ , մեռաւ անիկայ :

Ըսպասած էին ամիսներէն վեր  
 Մատղաչ երախայն սիրել անհամբեր  
 Իրենց նազելի անդրանիկ որդին  
 Ձո՛հ գընաց անգութ մահուան մանգաղին :

Ուստի յոյսերնին ի դերեւ ելան  
 Ընդունակ չեղան մըխիթարութեան  
 Քանի որ անոնք ատեն չունեցան  
 Լիպէր կոչելու նորածին տըղայն

Ատեն չունեցան գրգուել զանիկայ  
 Գիրկերնին առնել սիրոյն երախայ  
 Համբոյրներ գընել այտերուն վըրայ  
 Անոնց լացերուն չափ սահման չիկայ :



## ԺԸ. ԱՂԵՏԱԼԻ ԺԱՄՆ

**Ո**չ ի՞նչ տեսարան է այս սոսկալի  
Պատճառող մեզի տազնասիներ քանի  
Այլ չըկայ մեզի յոյս ազատութեան  
Հընչեղու վըրայ մեր վերջին վայրկեան :

Փոթորիկն է մեծ կը փըչէ քամի  
Ծովուն տատանում գաղարում չունի  
Անդունդին բերան անաւոր բացուած  
Կեանքեր կըլլեղու մընայ մեծաբաղձ :

Շողեհաւուն մէջ երկ հարիւր հողի  
Երեւներնուն գոյն են հողեվարքի  
Ազազակներով յուսահատական  
Տախտակամածներ գըրկած կը մընան :

Մերանց նըման են որ մեզ կոհակներ  
Մերթ վար կը տանին մերթ կը հանեն վեր  
Ծովուն բարկութեան այսչափ անուելի  
Արդեօք վըտանդ կայ որ հաւատարի :

Մըտատանջութեան աղէտն ու սարսափ  
Չափազանց ըրած անձերնուս տազնապ  
Սաստէ ով Աստուած որ գազրի ծովուն  
Անվերջանալի ալեկոծութիւն :

## ԺԹ. ԱՆԱՊԱՏԻ ՄԱՐԴՆ

**Ա**նապատ մարդն ու տէրն է արձակ  
Ազատ չունչ առնող բընութեան զաւակ  
Իրն է հորիզոն, լեռ, դաշտ, ու ձորակ  
Կը քամահրէ նա ցըրտոյն եղանակ :

Հոն ընտելացած չունի քաղքեհի  
Սովորութիւններ երես երկդիմի  
Պիտոյքն է նըւազ անտառին անկիւն  
Չունի փոյթ ծածկել իրեն մերկութիւն :

Ունի իրեն զէնք իրեն պարզութիւն  
Հիւժուիլ չը գիտեր ցաւով ախտերուն  
Ի՞նչ է չը գիտեր սեպհականութիւն  
Կէս մարդ կը կարծես եւ կէս անասուն :

Մութին կը պառկի, լուսոյն կարթըննայ  
Կը գիտէ արեւ զէմքով պըղընձեայ  
Անհոգ կը գըտնէ իր օրապահիկ  
Ծառեր տապալած կապրի երջանիկ :

Չըկայ իր անուն տետրակներուն վրայ  
Խոտի պէս բուսած օր մ'ալ կը չորնայ  
Անապատի մէջ ապրած բացօդեայ  
Ես գայն կանուանեմ ձիշգ փիլիսոփայ :



## Ի. ԴԺԲԱՂԴ ԲԱԳԱՐԱՏ

**ԱՅՈՒ** մեծցած էր բայց գիտէք ի՞նչպէս  
Չունէր մարդոց քով համարձակ երես  
Մինչեւ այն ժամէն որ էր երախայ  
Եկեղեցիին թողուած սեմին վրայ :

Մօր կաթ չէր ծըծած խեղճ ողորմելին  
Համբոյր չէր առած իրեն երեսին  
Հայրն ու մայրն անոր ինչպէս մէկ ըստուեր  
Աշխարհք բերած զինք էին ծածկըւեր :

Ըրած էին զինք մեղքերնուն պըտուղ  
Երկրի վրայ ձըղած անտէր եւ անպուր  
Ինքն ալ տեսնելով թէ է անանուն  
Անէծք տըւած էր յանցաւորներուն :

Իրեն ճակատին վրայ էր փոխանցեր  
Մէկ անջընջելի արատ սեւըստուեր  
Երբ ինքն էր անսպարտ մեղքին անտեղեակ  
Ընկերութեան մէջ ի՞նչ դըժբաղդ վիճակ :

Այն որ չէր պակսէր ուրիշ մարդերուն  
Իրեն կը պակսէր որոշ մականուն  
Գոնէ մէկ միջոց ըլլար այն խեղճին  
Որով կեղծ անունն դիւրաւ ջընջէին :

## ԻԱ. ԱՐԱՐՉԱԳՈՐԾՆ

**ԱՐԱՐՉԱԳՈՐԾ** Տէրն որ փառքին համար  
Սուրբ ձեռքովն իրեն ըրաւ այս աշխարհ  
Եւ ազգի ազգի կենդանիներով  
Անոր հինգ մասերն լեցուց եւ թէ ծով :

Նա տէր քարոզուած կեանքի եւ մահու  
Երկինքն ու երկիր բարեօք կը լընու  
Արտերէն ցորեան , ծառերէն պըտուղ  
Գետերէն ալ ջուր տըւող մըշտաբուղիս :

Որ ջերմ արեւով կեանք կը ծաւալէ  
Եւ մարգրտափայլ շիթեր լուսինէ  
Մեղուներէն մեղր , ոչխարներէն կաթ  
Անասպատէն որս կընձեռէ առատ :

Տարածելով իր նախախնամութիւն  
Անխրտիր բոլոր արարածներուն  
Հրաշքով ծովու մէջ զըրած մեր երկիր  
Լողացած ատեն չունի արհաւիր՝ :

Եղելութիւններ միշտ զինք կը պաշտեն  
Ինչու որ զանոնք ըրաւ ոչընչէն  
Անոր սուրբ անուան անդադարօրէն  
Անոնք ամէնքն ալ կ'երկըրպագանեն :



## ԻԲ. ԵՀՈՎԱՅ

**ԱՍՏՈՒԱՅ** քու կառքին ձայնն է ոսկեղէն  
Իր անիւններով արծաթեայ ամէն  
Որ վազած ատեն ամպերուն վերեւ  
Կը ճըզքէ զանոնք կը թափէ անձրեւ :

Ձայներ կ'արձակուին , լոյսեր կը փայլեն  
Յայտնապէս ահա հրաշքի է ատեն  
Վաստն զի Աստուած ելած է պըտոյտ  
Կամարին վերեւ Երկինքին կապոյտ :

Հոն բարձրութիւններ իրարու ետեւ  
Սոնարհելովն Սասուծոյ առջեւ  
Կը զգամ սըրտիս մէջ այս ինչ գաղափար  
Արեւն է բոլոր անոր քով խաւար :

Ոռքին ներքեւն են շարուած աստղներ  
Եւ մոլորակներն են զինք ճանչցող Տէր  
Երկինք անոր է կալուած սեպհական  
Եւ երկիր բոլոր ոտքին պատուանդան :

Մաղթանք իմ սրտին քեզի կ'ուզէմ Տէր  
Հաճէ այս երկիր ընել բարերեր  
Որ առատութեամբ ամէնքն յազեցած  
Քեզի օրհներգու ըլլան Տէր Աստուած :

## ԻԳ. ՍԱԲԱԻՈՎԹ

**ԲԸՆՈՒԹԵԱՆ** մէջն է որ ես գէմաղէմ  
Ակնարկիս առջեւ զըծուած կը տեսնեմ  
Մէկ կարողութիւն , եւ մէկ օգնութիւն  
Կարգապահութիւն ալ եղողներուն :

Երեքն այս յատուկ եւ թէ եզական  
Մէկ ըսկիզբէն է որ յառաջ կուգան  
Նոյն այն ըսկիզբն է բնութեան ազդող  
Կապուած անոր հետ, եւ ինքն անփոփոխ :

Ըսկիզբնապատճառ ամէն շարժումի  
Ամէն իրերու յայտնի եւ գաղտնի  
Մէկ համակեղրոն բարութիւններու  
Եւ ընդհանուրին շընորհաբաշխու :

Անով ամէն ինչ եղած գեղեցիկ  
Ասրնչութիւններ բոլոր հրաշալիք  
Որ մատուց արեւ կընէ շըրջաբեր  
Եղելութիւններ չըկան իրմէն վեր :

Տէր համատարած մեզ հետ ընտանի  
Մէկ լուսեղէն քօղ է որ վրայ ունի  
Կը համարձակիմ ես այսպիսի Տէր  
Կոչել հաճութեամբ ըսկիզբնական սէր :



ԻԿ. ՆԵՐՔԻՆ ՁԱՅՆՆ

**ՆԵՐՔ** արբտում էի յուսահատ զրեթէ  
Մերկ ու անօթի զուրկ օգնութենէ  
Մարմնով վարակեալ խոցերու մէջ լի  
Մեռնիլս ապրեղէն քաղցր է աւելի :

Հընչեց ականջիս հեշտալուր մէկ ձայն  
Ձայն որ ըսաւ — ես եմ քու օգնական  
Խոցերուս վրայ զըրած բալասոան  
Հասցուց կատարեալ զիս սուղջութեան :

Նոյնպէս կերակուր ինծի համադամ  
Տալով կըշտացուց ինք բարեխընամ  
Ինքն իսկ մերկութեանս ըզգեստ վայելուչ  
Այնքան խընամով հաղցուց աջալուրջ :

Ինքն էր ըսողն ինձ — ո՛վ մարդ անըզգայ  
Նախախնամութիւն եմ ես գերակայ  
Միշտ քեզի ծանօթ եւ միշտ քու Աստուած  
Թէ Ամենակալ , եւ թէ Ողորմած :

Նրբ զըրկըւած ես լըքուած երեսէ  
Ընկեր մի չունիս որ քեզ խընամէ  
Յիչէ անմտաց դուն քու ըստեղծող  
Որմէն է կախուած յաշողն ու ձախող :

ԻԵ. ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱՁՆ

**ԽԱՁՆ** է այգաւէն հաւատացելոյն  
Փրկութիւնն անոր , փառքն ու հեծութիւն  
Որուն վրայ Քրիստոս թափած իր արիւն  
Դըժոխքէն կորզեց յաղթանակութիւն :

Իր քառաթեւով նա չորս ծագերու  
Լոյս էր որ սրփուեց չողով կենսատու  
Անով աշխարհիս կերպարանք բողոր  
Յեղափոխուելով վերադարձաւ նոր :

Ազգեր ետ դարձան մողոր ճամբայէն  
Եւ լուսաւորուած թողուցին սուտ դէն  
Վերցաւ գերութիւն , խառնակ-կեցութիւն  
Մարգոց յատկութիւն եղաւ լաւագոյն :

Սաչով ճանչցաւ մարդ թէ մէկ է Աստուած  
Որմէն է կախուած ամէն արարած  
Քրիստոսի խաչին անեղ զօրութիւն  
Բընտութիւնն ընկճած զըրաւ մէկ անկիւն :

Անով հանգիստ կեանք աշխարհք վայելեց  
Քրիստոնէութիւնն հըռչակուեցաւ մեծ :  
Անոր ազատտան հաւատացեալներ  
Բընաւ ու երբէք չեն երկիւղի տէր :



## ԻԶ. ՔՐԻՍՏՈՍԻ ՓԱՌՔԵՆ

**ԱՅՍ** Ի՞նչ մեծութիւն է անպարագիր  
Փառքով տարածուած երկինք ու երկիր  
Որուն չը հասաւ ոչ մէկ Փառաւոն  
Ոչ ալ ինքնակալ՝ Մեծըն Նախորդոն :

Քրիստոս հեզութեամբ եւ խոնարհութեամբ  
Վայեց մեծութիւն այնքան հոյակապ  
Վարդապետութեամբ քաշեց անձնըւէր  
Նախապաշարեալ բիւր ժողովուրդներ :

Ըլլայ նիւթապաշտ , ըլլայ տարրապաշտ  
Հեթանոս ազգեր իրարու անհաշտ  
Ատելութիւններ ըրած ատեննին  
Քրիստոսի ձայնէն՝ յանկարծ կանկ առին :

Ի՞նչ էր անոր ձայն , եկած էր աշխարհ  
Սուրբ կրօնքն իրեն՝ զընելու համար  
Կրօնք որ սիրոյ կապով իրարու  
Հետ միշտ կապակցէ՝ մարդ մահկանացու :

Քանի՛ գերագոյն էր այն գաղափար  
Եւ իր գործադրած միջոց փրկարար  
Տէր Յիսուս Քրիստոս մէջն է սրբաբուն  
Սիրոյն սուրբ կրօնն է իրեն մեծութիւն :

## ԻԷ. ՔՐԻՍՏՈՍԻ ԽՐԱՏՆ

**ՔՐԻՍՏՈՍ** իր ընտրած աշակերտներուն  
Ըսաւ որ գործեն առաքինութիւն  
Եւ կեանքերնուն մէջ ջանան միշտ ըլլալ  
Իրեն երկնաւոր հօր պէս կատարեալ :

Չըլլան ետեւէ թէ իրենց ոգին  
Ինչ պիտի ուտէ քաղցած ատենին  
Հոգ չընեն երբէք թէ իրենց մարմին  
Ինչ ըզգեստ պիտի հագնի արտաքին :

Վասն զի ոգին վեր է կերակրէն  
Ինչպէս ալ մարմին քան ըզգեստեղէն  
Նայեցէք ըսաւ չունին ազոաւներ  
Սերմանելու հոգ հընձանի մըթեր :

Կերակրողն զանոնք ձերն ալ հոգ ունի  
Որ թռչուններէն լաւ էք աւելի  
Տեսէք այն շուշան որ բաց տեղ կածի  
Առանց ջանքի է այնքան զեղանի :

Մի՛ ըզբաղիք դուք թերահաւատներ  
Հեթանոսաց պէս ըլլալ նիւթասէր  
Աստուած գիտէ ձեր պիտոյքն ամէն այն  
Արքայութիւնն իր խնդրեցէք միայն :



## ԻՐ. ՔՐԻՍՏՈՍԻ ԿՏԱԿՆ

**ՔՐԻՍՏՈՍ** վախճանին հասած ժամանակ  
 Զիրար սիրելու թողուց սուրբ կրտակ  
 Պահողներն ըսաւ — սիրոյս այս պատուէր  
 Կ'ըլլան ճըշմարիտ իմ աշակերտներ :

Իր ընկեր սիրող զիս ալ սիրող է  
 Նաեւ քայլերուս եկողն ետեւէ  
 Այլ ես այնպիսին ծառայ չեմ կոչեր  
 Ծառայն չը գիտէր ինչ կամք ունի տէր :

Ես ձեզ կը կոչեմ իմ բարեկամներ  
 Եթէ հաստատուն պահէք դուք իմ սէր  
 Զեր խընդրուածներն իմ անուամբս եղած  
 Ամէնքն ալ պիտի կատարէ Աստուած :

Ահա ձեզ կուտամ իմ խաղաղութիւն  
 Ինչ որ աշխարհ չէ կարող տալ մէկուն  
 Ես զիս կը զոհեմ բարեկամաց վրայ  
 Ասկէց աւելի մեծ սէր միթէ կա՞յ :

Իմ համբառնալէս վերջ պիտի տայ Հայր  
 Զեզ ճըշմարտութեան հոգին մըխիթար  
 Այս է անձկութեանս ժամն ու ժամանակ  
 Եւ այս իմ աշխարհ գալուն նըպատակ :

## ԻԹ. ԱՆԱՌԻԿ ԱՄՐՈՑ

**ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ** կազմակերպութիւն  
 Հովուի մի ներքեւ ըլլալն է արթուն  
 Հեղինակութեամբ հոգեւորական  
 Յաղթող Բելիարին բըռնակալութեան :

Անոր ամբողջիւնն է անյաղթելի  
 Վասըն զի անշարժ մէկ վէմ հիմ ունի  
 Ուր կեդրոնացած ոյժ Աստուածութեան  
 Իր կարողութեան մեծագոյն նըչան :

Արդարութիւնն ալ այնտեղ մըշտապանձ  
 Կը թագաւորէ մինչեւ կատարած  
 Ոգին հեղութեան եւ խաղաղութեան  
 Ծոցին մէջ անոր է տեւողական :

Ճըշմարտութեան հոն ճառագայթած լոյս  
 Փարատած ունի ամէն տարակոյս  
 Օրէնքներն անոր սուրբ եւ տէրունի  
 Բարքերն է ուղղած եւ ըրած բարի :

Անկէ բացուած է սրբազան շաւիղ  
 Հանդերձեալ կեանքին տանող գէպուղիղ  
 Որուն մէջ քայլող Աստուածապաշտներ  
 Կը հասնին ըլլալ հրեշտակաց ընկեր :



Լ. ՏԱՃԱՐՆ

**Ի**Մ ցանկութիւնն է որ յարմարապէս  
Այս տողերուս մէջ նըկարագրեմ ես  
Քու եղելութիւննն անպարագրելի  
Բայց իմ խեղճ լեզուով պիտի կըրնայի՛ :

Դուն որ այս աշխարհ մեծագործութեան  
Քեզի կանգնեցիր տաճար եւ խորան  
Անոր հիմ դըրիր ծով լայնածաւալ  
Եւ կամար վըրայն երկինք աստղափայլ :

Այս տաճարին մէջ բոլոր հրաշալի  
Զիս անուանեցիր պաշտօնեայ քեզի  
Ուր յօժարակամ քու հրամաններուն  
Մընամ ընծայել սուրբ ծառայութիւնն :

Այս տաճարին ես կազմութեան ասպած  
Անոր վըրայ են ակնարկներս յառած  
Ուր առաւօտներ կը ծագին փայլուն  
Պըտուղներ կ'աճին , բոյսեր երփնագոյն :

Այս տաճարին մէջ միշտ վառ կանդեղներ  
Շողչողանք ունին մէկըզմէկէ վեր  
Վառ է քան զանոնք քու մեծագոյն սէր  
Քեզ կ'օրհնաբանեմ միշտ բարերար Տէր :

ԼԱ. ԻՄ ԱՂՈԹՔՆ

**Ք**եզ ո՛վ Յիսուս իմ միշտ կը հաւատամ  
Սուրբ խորհրդոյն մէջ ներկայ ամէն ժամ  
Եւ վրստահութեամբ քու վրայ հաստատուն  
Դրած եմ իմ յոյս թէ ակընկալութիւն :

Ամէն իրերէն քիչ աւելի վեր  
Պիտի պաշտեմ ես ինչպէս հրեշտակներ  
Մեծ սիրոյդ համար որով զիս արգէն  
Սիրեցի՛ր , զիս քեզ կուտամ փոխարէն :

Ես անհանգիստ եմ եւ սարսափով լի  
Վասըն զի ըստէպ քեզ վըշտացուցի  
Գործած մեզքերէս զըզուեցայ բոլոր  
Խիղճիս վիճակն է շատ աղետաւոր :

Սաստիկ յուզուած եմ այլայլութենէս  
Անցուցած օրերս կուլամ դառնապէս  
Ներէ՛ ով Յիսուս գործած մեզքերուս  
Դուն իմ հաւատքս ես , եւ թէ՛ վերջին յոյս :

Կառաջադրեմ Տէր ոչ այլ եւրս քեզ  
Անհաճոյ բլլալ ասըստամբի պէս  
Կուզեմ ասկէ վերջ տեսողապէս ալ  
Ապրիլ եւ մեռնիլ միշտ քեզ զո՞հ բլլալ :



## ԼԲ. ԵՍ ԿՈՅՍ ՄԻ ԵՄ

**ԵՍ** քու առջեւն եմ տարածուած դետին  
Ներքին մըրմունջով ո՛վ Աստուածածին  
Որ կոյսերուն ես դու կոյս թագուհին  
Ականջ դիր կուսին, սրբաախօս ձայնին :

Կուսական ըզգեստն հագած թանկագին  
Կուզեմ ես ունել մինչեւ շունչ վերջին  
Տագնապներուն մէջ ունայն աշխարհին  
Նղիր օգնական ինձ Աստուածածին :

Վասըն դի իմ դէմ այնքան ըստորին  
Ճակատ մըղած է անժոյժ թըշնամին  
Ձեռքին մէջ բըռնած բաժակ մահածին  
Ինձի խըմցընել կուզէ բըռնովին :

Յարձակումն անոր սաստիկ թէ ուժդին  
Տըկարութեան զիս մատնած է յետին  
Ահուդողին մէջ ասանկ զըժուարին  
Կարող չեմ տոկալ ճակատամարտին :

Որպէս զի չըլլամ ես բողորովին  
Կուսութենէն զուրկ եւ ամօթագին  
Դուն որ կոյսերուն՝ ես կոյս թագուհին  
Պահէ անարատ հոգիս ու մարմին :

## ԼԳ. ԱՍՏՈՒԾՈՅ ՇՆՈՐՀԲՆ

**ՆԵՇԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ** այլաբանական  
Ներկայ կենցաղն է մէկ ծուլու նըման  
Ուրտեղ հոգիներ կենցաղելովնին  
Ինչպէս թէ նաւով կը տարուբերուն :

Մոլորեալ հոգւոյն նաւ մըշտատագնապ  
Ահուդողի մէջ ալեկոծութեամբ  
Շուրջն են առած իր մըթագոյն ամպեր  
Կողմնացոյցն իրեն կը պատէ ըստուեր :

Ոհ փոթորիկներ իրեն թոյլ չեն  
Որ տատանումէն ունենայ դադար  
Հովերուն թողուած վիճակին մէջ այն  
Մօտ է անիկայ անդունդին բերան :

Միւս կողմէն բարի հոգւոյն նաւ ճամբորդ  
Փայլուն լոյս ունի իրեն առաջնորդ  
Աստուծոյ շընորհքն՝ որով համարձակ  
Նաւահանգիստ նա կը հաննի շխտակ :

Իրականապէս Աստուծոյ շընորհ  
Յուսոյ խարխսն է հոգւոյն հարկաւոր  
Ինչպէս որ ալ է մէկ պայծառ լամբար  
Եւ հետեւապէս բարի զեկավար :



ԼԴ. ԼՈՅՍ ԳԵՐԲՆԱԿԱՆ

**Ո**՞ւր արեւուն լոյսն եւ ոչ ալ լուսնին  
է յայտնողն ինձի թէ ինչ կայ անդին  
Այլ սուրբ հաւատքինն՝ որ մըշտայըստակ  
Ինձ կըզգացընէ ամէն պատրըւակ :

Ահա ես առանկ լուսով կը տեսնեմ  
Եղեւթիւններն ամէն դէմագէմ  
Մինչեւ ըսքօղեալ Աստուծոյ իսկ նոյն  
Կը նըշմարեմ ես անմահ գոյութիւն :

Թէ հանդերձեալ կեանք , թէ արքայութիւն  
Անանց պատիժն ալ մեղաւորներուն  
Կենցաղականաց ըլլալն անկայիւն  
Եւ անցաւորաց ընդունայնութիւն :

Խաբեբայութիւն չար սատանայներուն  
Հրեշտակաց բարի առաջնորդութիւն  
Մարդկային ազգին չարութեան հակումն  
Եւ աշխարհիս ալ գալիք կործանումն :

Այս իմ ունեցած լուսաւորութիւն  
Կը թափանցէ ալ ներքեւ խորերուն  
Գիտնալու այո՛ պէս պէս զանազան  
Թէ որչափ իրեր կան իմացական :

ԼԵ. ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿՆ

**ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԻՒՆՆ** հաճութեամբ բարի  
Հրեշտակ մի ընկեր տըւեր է ինձի  
Որ հոգ տանի ինձ ինչպէս տրկարի  
Որպէս զի ճամբէն չեթամ զարտուղի :

Երբոր անըզգոյշ ոտքով տարուբեր  
Գիպուածով կ'ուզուիմ լապիրինթոսներ  
Պաշտպանն իմ հասած , կը բըռնէ ձեռքէս  
Որ նոյն վըտանդէն անձն ազատեմ ես :

Այսպէս շատ անգամ մէջն ալ կենցաղոյս  
Երբ վըհատելով կը պակսի իմ յոյս  
Կըզգաստանամ ես զըրգմամբ հրեշտակին  
Եւ կը յորդորուիմ գործելու բարին :

Ոչ միշտ մըտադիր թէ այս աշխարհի  
Իրեր տըխրական կողմեր ալ ունի  
Շըփոթութեամբ երբ կ'ըլլամ տակնուվրայ  
Ժըպիտով հրեշտակն ինձի կ'երեւայ :

Հրեշտակ իմ պաշտպան , եւ ալ ապաւէն  
Առաջնորդ բարի Աստուծոյ կողմէն  
Ինձի հետեւող ամէն ակընթարթ  
Քեզ բուրովին եմ երախտապարտ :



## ԼԶ. ԵՐԲ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ

**ՄԱՂՄՈՍԵՐԳՈՒԻՆ** հետ կազազակեմ ես  
Տէր ե՞րբ պիտի գամ ու երեւնամ քեզ  
Երկրիս հրաժարած բոլոր ըզձերէն  
Մարմնոյս մերկացած ըզգեստ հողեղէն :

Ե՞րբ պիտի ըլլայ որ հեռանամ ես  
Պէս պէս իրերու համակրութենէս  
Որոնք երբէք զիս գոհացուցած չեն  
Իրենց ալ գերի՛ ըրած են վերջէն :

Ե՞րբ պիտի ըլլայ որ հաստատապէս  
Քեզմէն զատ մէկուն չը հետեւիմ ես  
Դաւանելով քեզ իմ միմբայն Տէր  
Եւ չը մոլորիմ պաշտել ուրիշներ :

Ե՞րբ պիտի ըլլայ Տէր իմ մարդասէր  
Որ բոլոր իմ սիրտ քեզի տամ նըւէր  
Դուն ըլլաս միայն իմ ուրախութիւն  
Քեզ ծառայութիւն ընեմ միշտ արթուն :

Ե՞րբ պիտի ըլլայ , որ ձրգեմ աշխարհք  
Եւ ըզձերն անոր ամէնն ալ անարգ  
Ազատելով զիս այսպիսի բանտէն  
Միշտ քեզ ժառանգեմ անոնց փոխարէն :

## ԻԳ. ԱՍՏՂ ԳԻՇԵՐՈՒԱՆ

**ԱՍՏՂԸԴ** գիշերի , որ կախ երկինքէն  
Նըչոյլ կը սրփոես երկրիս շուրջն ամէն  
Բընութիւն բոլոր երբ քուն է մրտած  
Խըշտին մէջ հանգչած ամէն արարած :

Եթէ կը հըսկես գիշեր ատեն դուն  
Պիտի տեսնես թէ՛ կան որ են անքուն  
Ոչ թէ թափառող միայն դազաններ  
Բընազգումովին իրենց գիշակեր :

Բանականներէն ալ որ՝ են մարդեր  
Ոհ քանի յօժար եւ անձնանըւէր  
Հանգիստնին զոհած պաշտօն Աստուծոյ  
Կուգեն ընծայել եւ ըլլալ հաճոյ :

Արդեօք կը տեսնե՞ս ոճիրներն ալ դուն  
Մութին մէջ պահուած չարագործներուն  
Կը տեսնես զանոնք թէ ի՞նչպէս անքուն  
Անըզգամութեան մէջն են մընայուն :

Աստղըզ գիշերին , որ կախ երկինքէն  
Նըչոյլ կը սրփոես երկրիս շուրջն ամէն  
Սրփոէ քու նըչոյլ անոնց հողոյ վրայ  
Դազրին ըլլալէն ասանկ անուղղայ :



ԼԸ. ԿՍՏԱՐԱԾԻ ՄՕՏ

**ՈՒՆԵՆԱՅ** պիտի աշխարհ մէկ վախճան  
 Որմէն առաջ նեո պիտի գայ դաժան  
 Հաւատացեալներ խաբելու համար  
 Իր հընարիմաց միջոցով հազար :

Իր չարագուշակ գալուստն այս աշխարհ  
 Մեծ զբժբազգութեան ըլլալով պատճառ  
 Վայեր քայլերուն պիտի հետեւին  
 Շատեր որսացուած իրմէն բըննովին :

Սուրբ եկեղեցիին դէմ պիտի զինի  
 Սատանայական հընարքով քանի  
 Անմեղ հոգիներն ընել իր գերի  
 Եւ վերջապէս ալ որդի գեհենի :

Կաւանդըլի թէ՛ իր արբանեակներ  
 Բեւեռին մէկէն մինչեւ միւս բեւեռ  
 Առանց դադարման ամէն տեղ երթան  
 Գաղափարներով իրենց չարութեան :

Մեսիային սուրբ գործն աւրելու համար  
 Որ մարդկութիւնն էր փրկիլի ջանահնար  
 Երանի՛ սնանց որ այն օրերուն  
 Չը պիտի համարին ունել փորձութիւն :

ԼԹ. ԱՌԱՆՁՆՈՒԹԻՒՆՆ

**ԱՌԱՆՁՆՈՒԹԵԱՆ** մէջ ես քեզի դարձած  
 Քեզմէն անձկանօք կըսպասեմ Աստուած  
 Սըրտի հարկաւոր մըխլթարութիւն  
 Այն որ չի կայ քովն արարածներուն :

Անոնց պատճառած ինծի յուզմունքներ  
 Ձիս բողորովին են յոյնեցուցեր  
 Մինչ այն աստիճան ըրած զիս տրկար  
 Որ վըտանգ կայ ինձ ըլլալ խելագար :

Հոգերուն մէջ միշտ առօրեայներուն  
 Փռն տեղ կը փընտոեմ իմ հանդարտութիւն  
 Անոնցմէն խաբուած եւ թէ անարգուած  
 Գըրգիւ եւ ինծի քեզի դէմ Աստուած :

Ես չեմ գըտներ քովն իմ ընկերներուն  
 Կրօնքին ուսուցած այն անկեղծութիւն  
 Անոնցմէն ծաղիկ երեւցող դըրսէն  
 Ներսէն փուշեր են որ զիս կը ծակեն :

Ո՛վ իմ սըրտիս Տէր Էակ Գերագոյն  
 Ըզգալի ըրէ քու ներկայութիւն  
 Ո՛հ չը խաբուիմ այլ առօրեայներէն  
 Անոնք որ ամէն՝ զիս պաշարած են :



## Խ. ԱՍՏՈՒԾՈՅ ՎՐԷԺՆ

**ԵՐԱԿՆԻՔ** կը գոռայ մըտընջմամբ անեղ  
Կ'երերայ մէկէն երկիր ամէն տեղ  
Տարերք են դարձած դաժան ու զըժխեմ  
Բարկացած է Տէր անօրինաց դէմ :

Այլ չէ անիկայ Արարիչ բարի  
Դարձած ու եղած Աստուած սոսկալի  
Բացած է իրեն անեղ դատաստան  
Հրեշտակք են եկած ըլլալ ամբաստան :

Դողացէ՛ք ուրեմն ո՛վ անօրէններ  
Դուք որ շատնցմէն մոռցած ունէք Տէր  
Լըսեցէ՛ք թէ ձեզ ինչպէս տարածամ  
Կ'արձակէ վերջին վրճիւ ու պատգամ :

Ահա կը գոչէ ձայնով անաւոր  
Վըրէժխընդրութիւնս կը յայտնեմ այսօր  
Դարաւոր վըրէժներ , որ համբերատարը  
Ձանց էի բրած ես անյիշաչար :

Վըրէժ կը հանեմ իմ արդարութեան  
Անօրէններէն որ զիս չը ճանչցան  
Վըրէժ սոսկալի բոլոր անոնցմէն  
Որ պատուիրաններս արճամարճած են :

## ԽԱ. ՄՈՒՋԱՅԻՆ ԵՐԳՆ

**ԹՅԵՒ** հաստատուն ես կամք ունեցայ  
Ձը գըրել այլ եւս նոր նիւթի վըրայ  
Սակայն սըրտիս մէջ սըպըրդած աւիւն  
Փոխել տըւաւ իմ զիտաւորութիւն :

Բանաստեղծութեան ես սիրով վառուած  
Անով ուզեցի գըրել մէկ հաստուած  
Քերթուած ներշնչուած միայն անօրմէն  
Որուն բանաստեղծք Մուզա կը կանչեն :

Անոր հեշտալուր եւ ներդաշնակ երգ  
Շեշտերով կ'ըսեմ թէ սուր եւ թէ լերկ  
Ինչպէս ալ վանկեր բոլոր սիրահունչ  
Երկիրքէն ունին առած իրենց շունչ :

Գեղախօսական անոր սուրբ հրապոյր  
Հեան է զիս կապած՝ կաշկանդած ամուր  
Այսպէս ալ անոր խանդավառութիւն  
Սըրտիս թափանցած խորութիւններուն :

Ես Մուզային երգն այսպիսի վըրեմ ,  
Ամէն երգերէն բարձրը կը դասեմ  
Որ եւ ըլլալովն ինծի սուրբ աւանդ  
Բորբոքեալ իմ միշտ կը պահէ եռանդ :



## ԽԲ. ՄՈՒԶԱՅԻՆ ՀԱՐՅՆ

**ԵՍ** երբ բանաստեղծ զիս ըրած էի  
Մուգայն քընարով երեւցած ինձի  
Հարցափորձեց թէ՛ արդեօք ունէի  
Բանաստեղծական աւիւն եւ ոգի :

Ցընցըւելով ես Մուգային ձայնէն  
Իրաւ չեմ գիտեր ինչպէս այն ատեն  
Հասակիս մէջ ես կ'ըսեմ պատանի  
Յարգանքով մ'իրեն պատասխանեցի :

Ըսի — ո՛վ դըշխոյ , կը սիրեմ ես երգ  
Յոանդն ըրած չէ՛ զիս երբեք պըղերդ .  
Ժամերուն մէջն ալ անցուցած ամէն  
Ներշնչըւած եմ առարկայներէն :

Թէ կը սիրեմ ես բանաստեղծութիւն  
Մըտքով կը թըռչիմ վերեւ սարերուն  
Կը հետազօտեմ հոն համատարած  
Հրաշալիքներուն պէս պէս յօրինուած :

Այո՛ կը սիրեմ եւ միշտ կը սիրեմ  
Բընութեան երգերն մըրմունջներ վըսեմ  
Մանակցելով ալ ես այն երգերուն  
Կ'ըզգամ աւիւն , թէ ոգեւորութիւն :

## ԽԳ. ԱԻԻՆՆ

**ԿԼԵՐԿԻՆ** ինն էին իմին տարիներ  
Իմ տեսածն ամէն ինձի կը ժըպտեր  
Տարիք որուն մէջ ըզգալով աւիւն  
Գըրել ըսկըսայ բանաստեղծութիւն :

Այն ատեն զիս խինդ եւ երջանկութիւն  
Կը պաշարէին հաւատարագոյն  
Եւ ամէն մէկ ալ եղելութիւններ  
Երգեր կ'ըլլային իմ սիրոյն նըւէր :

Ու ես կ'երգէի ինչպէս մէկ թըռչուն  
Շուրջեր սաւառնած դալարիներուն  
Գազար չունէի հանգըստանալու  
Ինձ չափ թեթեւ չէր եւ ոչ եղջերու :

Իմին մըրմունջներն էին անաղմուկ  
Մէկ գի թողուցած հոգ եւ մըրմըտուք  
Ես կ'ողջունէի այն մեծ արեգակ  
Որ իրեն պըտոյտ կ'ընէր յաջողակ :

Սըրտիս մէջէն ալ ես կը լըսէի  
Թէ միշտ ժըպտաներ կըսպասեն ինձի  
Այն ատեն երբոր գեո սիրապատկեր  
Կըրկին ինն էին իմին տարիներ :



ԽԳ. ԿՐԿԻՆ ՈԳԻՆԵՐ

**ԿՐԿԻՆ** ոգիներ իմ աջ ու ձախ դին  
Շահադրրդուութեամբ զիս կը դիտէին  
Երբ մէկ նիւթ առած ես բարոյական  
Կուղէի ընել ինծի բընաբան :

Ձախակողմեանն էր՝ ոգին չարութեան  
Որ մէկ գարշելի ունէր կերպարան  
Նա շատ կըշտամբանք տալով ինձ ըսաւ  
Թէ իրեն համար չէի ես մարդ լաւ :

Որ գըրուածովն իմ խրատ բարոյական  
Յանդըզնած էի տալ ժողովրդեան  
Ճաթեցընելով անոնց ականջներ  
Ձանձրոյթ պատճառելս չէի մըտածեր :

Աջակողմինն ալ՝ ոգին բարութեան  
Նայուածքով չըքնաղ հրեշտականըման  
Հողանի բազուկն՝ ուսիս վրայ դըրած  
Խօսք ուղղեց ինծի քաջալերանայ :

Թէ Բաստ Բաղդ Ունիս՝ գովելի էի  
Կըրթութ շնն ըրած կէտ նըղատակի  
Եւ թէ Մեսրոպայ անմահ Քերթողի  
Ձանացած էի կոչուելու որդի :

ԽԵ. ՀԱՐԱԶԱՏԻՆ ՍԷՐ (Ա)

**ՉԸ ՀԱՍՆԻՐ** արդեօք այն օտար ախուք  
Պանդուխտ իմ եղբայր սըրտիս քեզ անձուկ  
Եւ ձայնիս վանկեր այս թափանց օղէն  
Որ զիրար ամուր սիրով կապած են :

Հարազատութեան ըզգացմունքն արդէն  
Տըխրական վիճակս յայտնի քեզ կ'ընեն  
Մինչեւ հոն գալու հառաչանքիս ձայն  
Գիտէ քու սըրտին գաղտուկ այն ճամբայն :

Ամառուան ասեն՝ երբ մէկ ճերմակ քօղ  
Գայ լուսին ծածկել, կաթել հոն տեղ ցօղ  
Յիչէ արցունքներն հեռուէն քու եղբօր  
Որ քեզի համար կը թափէ բոլոր :

Երբոր զեփիւռէն ալիքներ ծածան  
Եւ ծաղիկներուն ալ միանգամայն  
Քստղբարբոյր հոտեր թէ քու շուրջ բուրեն  
Եւ թէ ասդիի հասնին եղերքէն :

Ըսէ — ալիքներն են դանգատանքներ  
Հոտն ըսքանչելի մըրմունջներն ու սէր  
Իսկ մեղմահուռչ հովն ալ շունջն է իրեն  
Որ ինձ կը հասնին իմ եղբօր կողմէն :



## ԽԶ. ՀԱՐԱԶԱՏԻՆ ՍԷՐ (Բ)

**Իսկ** երբոր տեսնես ալիքներ սեւզոյն  
 Կոհակներ կըսես՝ իրար վրայ փրփրուն  
 Ընդարձակ ծովն ալ վըտանգով լեցուն  
 Բոլորտիքն անոր պատած մըթուլիւն :

Միտք բեր այն ատեն , իմ անձ վըշտահար  
 Ալիքներուն մէջ հազար ու հազար  
 Եւ հանդարտութիւնն ալիքներուն այն  
 Կըլլայ միջոցով դէմքիդ տեսութեան :

Ես որ այս կերպով կը խօսիմ քեզի  
 Եւ քեզ կը կարծեմ տեսնել կենդանի  
 Ինչպէս թէ ըլլաս զիմացս անձնաբար  
 Ըլլաս առանձին ինձի մըլխիթար :

Իսկ դուն իմ տըխուր վիճակիս նայած  
 Զիս եղբայր կանչես անուամբ անմտաց  
 Ես քու յիշատակ պահող եմ անամից  
 Վըստահ միշտ եղիր բընաւ անկասկած :

Այս անոյշ ձայնն է տըւող քաջալեր  
 Որչափ քընարին անոյշ չեն թելեր  
 Եղբարց համակրանքն երբէք չեն զատեր  
 Թէպէտ հեռաւոր ըլլան եղերքներ :

## ԽԷ. ՀԱՐԱԶԱՏԻՆ ՍԷՐ (Գ)

**ԴՌՈՒՆ** որ խընդումի եւ թէ վըշտերուն  
 Ատեններն ունիս ինձ պէս անձկութիւն  
 Միշտ յուզուած սըբատով , անհանդիստ ու վառ  
 Եւ մըտածելու ետեւ քու եղբայր :

Անձկութեան պատճառ քու դէմք ցանկալի  
 Երեւոյթով է ինչպէս մէկ ոգի  
 Որ թեւեր հագած՝ ձեւով հրեշտակի  
 Մերթ կանհետանայ , եւ մերթ կերեւի :

Բայց ուր որ ըլլաս՝ ինձ հետ կը բաժնես  
 Թէ քու ժըպիտներ թէ վըշտեր պէս պէս  
 Եւ թարգման մեր մէջ՝ կ'ըլլան ալ բոլոր  
 Իրերն երկնաւոր , եւ թէ երկրաւոր :

Ըստէպ կը խաբեմ զիս այս երազով  
 Ինչպէս թէ քեզ եմ՝ տեսած ապահով  
 Ասանկ թէ իմ միտք , եւ թէ ալ ակնարկ  
 Քու մէջ ըզմայլման ունին նըպատակ :

Այսպիսի ըզձեր՝ են որ զիս կայրեն  
 Հեռացում ինձի չըկայ անոնցմէն  
 Որով իմ ժամեր կանցնին ըզբաղած  
 Կը հասնին տարիքս իրենց ըսպառուած :



ԽԸ. ՀԱՐԱՉԱՏԻՆ ՍԷՐ (Գ)

**Ի**ր երեկոյէն՝ թէ առաջ իմ օր  
Վըշտազին ասանկ աւարտի երբոր  
Ի՞նչպէս տարածեն երկու եղբայրներ  
Իրենց բազուկներ իրար գըրկաբեր :

Քեզ կանչելուս ո՞հ եթէ տեղեակ չես  
Երբ կեանքս իր վախճան կը դիմէ այսպէս  
Երբ ալ չենք կըրնար տեսնել մէկըզմէկ  
Եւ լալով կարգաս քեզ թողածս այս երգ :

Քեզմէն մոռցըւած երբէք չեմ երթար  
Երբ սուրբ մըրմունջով յիշես քու եղբայր  
Եւ վերանաս դուն արխրութեան միջեւ  
Փընտռելու զիս հոն Աստուծոյ առջեւ :

Մեռած ասդիի ազատած կեանքէն  
Մեզ հոն այլ վիճակ, եւ սէր կըսպասեն  
Այն ատեն եղբայր մեր զգեցած կեանք  
Նոր մէկ գեղեցիկ կ'առնեն կերպարանք :

Աշխարհքէ աշխարհք թըռած մեր հողիք  
Արեւուն պիտի քայլեն բոլորտիք  
Եւ անանցական ուրախութեան մէջ  
Մեր ըզմայմունքներ օն չունին այլ վերջ :

ԽԹ. ՄԱՀՈՒԱՆ ԺԱՄ

**Մ**աՀՈՒԱՆ ժամն հասաւ պիտի մեռնիմ ես  
Հանգչիլ ես կուղեմ արդարներուն պէս  
Քահանայն կանգնած բարձիս քով կանգուն  
Խաչով կը մաղթէ մեզաց թողութիւն :

Սյլ ես աշխարհիս չեմ վերաբերիր  
Հիմակ հողեվարք, իսկ յետոյ մոխիր .  
Իմ գերդաստանիս կուսամ վերջնողջոյն  
Ազգականներուն, բարեկամներուն :

Կեանքին պատերազմ, սրտի յուզմունքներ  
Խըզճի խայթերով այնքան խըստամբեր  
Աչքերուս առջեւ այս վերջին ժամուն  
Մերկապարանոց ունին իրենց գոյն :

Ներումն ինձ չնորհեն որոնք որ երբեմն  
Ատած եմ եւ թէ վըշտացուցած եմ  
Որոնց գէմ որ ես անխրաւեցայ  
Չըրկանքներ ըրի կամայ ահամայ :

Մընացէ՛ք բարեաւ կենցաղականներ  
Ինչու որ կեանքիս կը մարի լապտեր .  
Ո՛վ ամէն վայրեր ուր տառապեցայ  
Եւ ուր վայլեցի բարիք խաբեբայ :



## Ծ. ԲՈՒՆ ԵՐԱՆԱԿԱՆ

**Ո՛Վ** երանաւէտ եւ տենջալի քուն  
Որ կառաջնորդես մարդն անմահութիւն  
Ընդունելու հոն լուսեղէն պրտակ  
Յաւերժացնելու տարած յաղթանակ :

Քուն սուրբ որ մարդու՝ նոր ծընունդ կուտաս  
Օրեր տեսնելու Երկինքին դարպաս  
Հոն ուր կ'երգեցուի երգն Ալիւուիա  
Թէ Երեքսրբեանն , եւ թէ Ովսաննա :

Ուր ոչ լապտերին , եւ ոչ արեւուն  
Լոյսն է որ կուտայ լուսաւորութիւն  
Ուր Սերովբէներ , եւ Քերովբէներ  
Դաս առ դաս կ'երգեն Սուրբ Սուրբ Սուրբ եւ Տէր :

Կեանքն այն հանդերձեալ որ երկրաւոր չէ  
Իրեն մէջ չունի ոչ ժամ ոչ րոպէ  
Այլեւ տըխրադէմ չըկայ հետք մահուն  
Խաղաղութեան ալ վերջաւորութիւն :

Ով փրկուէտ քուն եւ սրբբանամրոյր  
Ունեցողին քեզ երանի է բիւր  
Երանական նոյն քընով կը ցանկամ  
Քընանալու եւ իմին վերջին ժամ :

## ԾԱ. ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

**ՀԱՐԱԶԱՏՈՒԹԵԱՆԴ** ցանկալի նամակ  
Ձեռքս հասաւ այսօր սիրով պարունակ  
Դուն որ ազնիւ ես եւ անզուգական  
Շընորհակալ եմ քու մըտադրութեան :

Մեծ է ինձ համար , այն քու համակրանք  
Փափաքելի յալ , քու սիրուն նամակ  
Համակիր ըղձով այնքան տողորուած  
Ո՛հ քանի կըսեմ կը սպասեմ քու դարձ :

Արդարեւ քեզի կը բաղձայի շատ  
Սիրալիր լուրեր տալու խանդակաթ  
Մեր սիրելութեան եւ ըզգածմանց վրայ  
Հարկաւորն գրելով բաւականացայ :

Սըրտէ ալ բըղխած ըլլալուն համար  
Քիչն ալ դասեցի շատին հաւասար  
Լըրջամիտ եղողն կարծին հետեւորդ  
Ձանց կընէ երկայն բաներ աւելորդ :

Հաւաստեօք սիրոյս կընքեմ սոցն նամակ  
Անջինջ պահելով անուանող յիշատակ  
Եւ կը մաղթեմ ալ՝ քեզ յաջողաբեր  
Օրեր տարիներ , որոնց մէջ ողջ լե՛ր :



ԾԲ. ԻՄ ՔԵՐԹՈՒԱԾՔՆ

Յ Ա Ն Կ

Բ. Հ Ա Տ Ո Ր Ո Յ

**ԵՍ** չեմ հաւատար գովասանքներուն  
 Անոնց որ կ'ընեն շողսքորթութիւն  
 Ինչպէս թէ տողերս ըլլան պատուական  
 Սեպողներ ալ կան զանոնք անպիտան :

Ինչու որ ոմանք, են իմ մըտերիմ  
 Ոմանք թըշնամի ինծի սխերիմ .  
 Մէկուն մէկալին՝ ես ամենեւին  
 Կարեւորութիւն չեմ տար ըսածին :

Կողմնակալութեամբ, կամ թէ քրմածին  
 Քրննադատութիւնք մէկ արժէք չունին  
 Այլ պէտք է ըլլան անոնք ողջամիտ  
 Եւ ճըշմարտութիւնն ունել շարժառիթ :

Եթէ ունենան, եւ թէ չունենան,  
 Աշխատանքս արժէք բանաստեղծական  
 Մասնաւորներուն դատողութենէն՝  
 Ոչ թէ կը փոխուին եւ այլ գոյն կ'առնեն :

Ինչ որ ըլլան իմ քերթողութիւններ  
 Որ կարճ ի կարճոց հոս եմ ամփոփեր  
 Հաւնողին համար բարի համարութիւն  
 Չը հաւնողին ալ ինչ որ կ'ընեն ինչպէս



Ա.	Այգօրէին երգն . . . . .	9
Բ.	Ամանորն . . . . .	10
Գ.	Համատաբածն . . . . .	11
Դ.	Բանդագուշանք . . . . .	12
Ե.	Ծովային գրօսանք . . . . .	13
Զ.	Գիւղացիներուն երգն . . . . .	14
Է.	Իմ տղայութիւնն . . . . .	15
Ը.	Իմ մօր յիշատակն . . . . .	16
Թ.	Առաջին դասն . . . . .	17
Ժ.	Ժիրայր . . . . .	18
ժԱ.	Համակրանք . . . . .	19
ժԲ.	Բուռն է սեր . . . . .	20
ժԳ.	Աղէ . . . . .	21
ժԴ.	Ցնորք . . . . .	22
ժԵ.	Հնագանդութիւն . . . . .	23
ժԶ.	Յառաջադրութիւնն . . . . .	24
ժԷ.	Առաջին ցան . . . . .	25
ժԸ.	Աղետալի ժամն . . . . .	26
ժԹ.	Անպատի մարդն . . . . .	27
Ի.	Դժբաղդ Բագարաս . . . . .	28
ԻԱ.	Արարչագործն . . . . .	29
ԻԲ.	Եհովայ . . . . .	30
ԻԳ.	Սարաուլք . . . . .	31
ԻԴ.	Ներքին ձայնն . . . . .	32
ԻԵ.	Քրիստոսի Խաչն . . . . .	33



ԻԶ .	Քրիստոսի փառքն . . . . .	34
ԻԷ .	Քրիստոսի խրատն . . . . .	35
ԻԸ .	Քրիստոսի կտակն . . . . .	36
ԻԹ .	Անառիկ ամբոց . . . . .	37
Լ .	Տաճարն . . . . .	38
ԼԱ .	Իմ աղօթքն . . . . .	39
ԼԲ .	Ես կոյս մի եմ . . . . .	40
ԼԳ .	Աստուծոյ շնորհքն . . . . .	41
ԼԴ .	Լոյս գերբնական . . . . .	42
ԼԵ .	Պահապան հրեշտակն . . . . .	43
ԼԶ .	Ե՞րբ պիտի ըլլայ . . . . .	44
ԼԷ .	Աստղ գիշերուան . . . . .	45
ԼԸ .	Կատարածի մօտ . . . . .	46
ԼԹ .	Սուանձնութիւնն . . . . .	47
Խ .	Աստուծոյ վրեժն . . . . .	48
ԽԱ .	Մուգային երգն . . . . .	49
ԽԲ .	Մուգային հարցն . . . . .	50
ԽԳ .	Աւիւնն . . . . .	51
ԽԴ .	Կրկին ոգիներ . . . . .	52
ԽԵ .	Հարագատին սէր (Ա) . . . . .	53
ԽԶ .	Հարագատին սէր (Բ) . . . . .	54
ԽԷ .	Հարագատին սէր (Գ) . . . . .	55
ԽԸ .	Հարագատին սէր (Դ) . . . . .	56
ԽԹ .	Մահուան ժամ . . . . .	57
Ծ .	Քուն երանական . . . . .	58
ԾԱ .	Թղթակցութիւն . . . . .	59
ԾԲ .	Իմ քերթուածքն . . . . .	60

ԱՌՇԱԻԱՏՁԵԱՅՔ — ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆՔ


Ա	Տող 2	Ըզմուզայս ես կարդամ
Բ	» 21	Յոյս մեր ի քեզ եւ յԱստուած
ԺԱ	» 8	Տեսի ի ժպիտ յիմ տան ժաման
ԺԸ	» 20	Եթող անդէն դրամքս կըրկին
Ի	» 23	Եւ անեղիցն անդ համհարզ
ԻԵ	» 4	Ձքնաղագեղ Հոփիսիւնայ
ԻԸ	» 23	Դու պընդակազմ կաց մեզ պաշտպան
ԼԲ	» 13	Ձըւարթացաւ զուարճացաւ
ԼԳ	» 12	Եղաւ հիմն հաւատոյ Կեփայեանն
ԼԵ	» 13	Որմէն ըսկիզբն եղաւ անանց
ԼԵ	» 19	Արդ որ հիմա դու սիրասուն
ԼԶ	» 6	Ըզհեծուծիւնս մի ըստ միոջէ
ԽԳ	» 5	Նոյն ինքն հայր մեր գայ, բարէ
ԽԾ	» 8	Նա յաւելեաց փառս ի վերայ իւր փառաց

ԱՄԱՂԹԵՂՋԻԻՐ — ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ե	Տող 18	Քըրտինք
ԻԳ	» 9	Բընուծեան
ԼԳ	» 11	Ձեն տար
ԼԴ	» 15	Խարէուծիւն
ԼԷ	» 2	<b>ԼԷ.</b>
ԼԸ	» 7	ԴԷ









18890  
18891  
18892

2015



